կեանքի, վարք ու բարքի, սովորութիւնների, նախապաշարումների և անոտիապաշտութիւնների ընդհանուր պատկերը։

Վերջին նամակումդ գրում ես, որ շուտով թողնեմ տեղս. արդէն ես էլ մտադիր էի մնաք բարով ասելու իմ ծանօթներին. շուտով կճանապարհւեմ։ Ընդունիր ուրեմն սիրելիս կարօտալիր բարևներս։

Քո՝

ԱՐԱՄ

Քեարւանդ-Քրդեր, 13 Հոկտեմբեր, 1918.

Սիրելի Վարդուհի,

Անցեալ նամակներումս Քեզ նկարագրեցի Փէրիա գաւառն իր բոլոր ընորոշ գծերով. այժմ իբրև յաւելուած Քեզ պիտի գրեմ Քեարւանդ գաւառի երկու հայաբնակ գիւղերի մասին, ուր հէնց այսօր իջևանել եմ։

Ինչպէս Փէրիայում, այնպէս էլ այստեղ տեղի են ունեցել անասելի հարստահարութիւններ և սոսկումներ, որոնց վրայ անհնար է առանց սարսափի նայել։ Ես կաշխատեմ պատկերացնել Քեզ այդ դէպքերը, մի քանի տեսարանների և պատկերների նկարագրութեամբ, գէթ աղօտ կերպով գաղափար տալու համար։ Այլևս Դու ինձ նամակ մի գրել, շուտով ես Քեզ մօտ կը լինեմ։

* * *

ՍՊԱՀԱՆԻ ՔԵԱՐՒԱՆԴ ԳԱՒԱՌԸ

—

Սպահանի Քեարւանդ գաւառը գտնւում է Նոր—Զուղայից դէպի արևմուտք, 16 ֆարսախ հեռու տարածութեան վրայ. դա լեռնաշղթաների, ժայռերի և հովիտների փէշե-